

Դրամական զանգվածի նկատմամբ վերահսկողությունը ենթադրում է կոշտ դրամավարկային քաղաքականության վարում: Եթե դրամական զանգվածի աճը դանդաղում է, ապա փողի նկատմամբ ավելցուկային պահանջարկ է առաջանում (առաջարկի համեմատ): Փողի պահանջարկի աճը առաջ է բերում տոկոսադրույքների աճ և ծախսերի անկում: Տոկոսադրույքների աճը հանգեցնում է վճարային հաշվեկշռի բարելավմանը: Սակայն գոյություն ունեն նուրբ տարբերություններ դրամական զանգվածի աճի սահմանների և սովորական կոշտ դրամավարկային քաղաքականության միջև:

Ֆիքսված արժույթային փոխարժեքներով բաց տնտեսություններում դրամական զանգվածի ծավալը կախված է ոչ միայն կենտրոնական բանկի ձգտումներից, այն չի կարող ամբողջությամբ վերահսկել փողի առաջարկը, որովհետև ստիպված է ազգային արժույթի փոխարժեքը պաշտպանելու համար ցանկացած պահանջարկ ծածկել արտասահմանյան արժույթով: Մյուս կողմից էլ կոշտ դրամավարկային քաղաքականությունը, կապված լինելով վարկի սահմանափակման հետ, սովորաբար տնտեսական անկում է առաջ բերում:

Մոնետարիզմի տեսությունից բխում է, որ ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը՝ դեվալիվացիան, կարող է բարելավել վճարային հաշվեկշռի վիճակը միայն կարճաժամկետում: Այսպես, դեվալիվացիան իրոք բարելավում է երկրի մրցակցային վիճակը միջազգային շուկաներում, որն էլ հանգեցնում է արտաքին առևտրի դրական հաշվեմնացորդին: Համաձայն մոնետարիստական տեսության, դրական հաշվեմնացորդը տվյալ դեպքում (քանի որ դրամական զանգվածի մեծացում չի կատարվում) ուղեկցվում է փողի պահանջարկի աճով: Նման իրավիճակը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ դրամական զանգվածը չի համապատասխանելու փողի պահանջարկի նոր մակարդակին, իսկ վճարային հաշվեկշիռը չի հավասարակշռվի: Այսպիսով, դեվալիվացիան տնտեսության համար ժամանակավոր էֆեկտ է ունենում, որը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ գները և փողի առաջարկը չեն աճի ներմուծված ապրանքների և ծառայությունների առավել բարձր գները ամբողջությամբ փոխհատուցելու համար:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ մոնետարիստական տեսությունը, կապված վճարային հաշվեկշռի վերլուծության հետ, վերաբերում է ֆիքսված արժույթային փոխարժեքներին: Եթե այդ տեսությունը կիրառվի լողացող արժույթային փոխարժեքներով երկրի վճարային հաշվեկշռի նկատմամբ, ապա վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը (պաշտոնական հաշվարկների հաշվեմնացորդը) կդառնա ինքնակարգավորվող, պաշտոնական ոսկյա արժույթային ռեզերվների մեծությունը չի փոխվելու, իսկ դրամական զանգվածը ամբողջությամբ գտնվելու է մոնետարիստական տեսությունների վերահսկողության տակ:

Քեյնսյան և մոնետարիստական տեսությունների համեմատությունից պարզվում է, որ մոնետարիստական մոտեցումը իրականում անկիրառելի է վճարային հաշվեկշռի վիճակի վատթարացման պատճառների վերլուծության համար: Բանն այն է, որ վճարային հաշվեկշռի պակասուրդի պատճառը կարող է ընդհանուր ոչինչ չունենալ՝ փողի ավելցուկային առաջարկի հետ, իսկ դրա հավասարեցումը դրամավարկային քաղաքականության միջոցառումների օգնությամբ կարող է հանգեցնել անկանխատեսելի արդյունքների: Վճարային հաշվեկշռի պակասուրդը կարող է առաջանալ նույնիսկ դրամական շուկայի հավասարակշռության պայմաններում, օրինակ՝ արտահանվող ապրանքների արտաքին պահանջարկի անկման հետևանքով: Այս դեպքում դրամական զանգվածի սահմանափակումը կարող է հանգեցնել գործազրկության մակարդակի և համախառն թողարկման մեծացմանը՝ չվերացնելով վճարային հաշվեկշռի պակասուրդը:

ՍՈՍ ԼՊՈՒՏՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

Տնտեսվարման նոր հարաբերություններում գտնվող յուրաքանչյուր երկիր չի կարող գոյատևել կամ զարգանալ առանց շուկայական տնտեսությանը հատուկ ենթակառուցվածքների, այդ թվում նաև բանկային համակարգի, որի հիմքում ընկած է առևտրային բանկի գործունեությունը: Շուկայական տնտեսության ամրապնդման հետ գույզընթաց անհնար է դառնում բանկի զարգացումը, եթե չի դիտարկվում նրա շուկայական ինստիտուտի դերը: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս բանկային համակարգի առջև ծառացել են լուրջ խնդիրներ, որոնց լուծումից մեծապես կախված է, թե արդյո՞ք այդ համակարգը կշարունակի գործել ու զարգանալ այնպես, ինչպես այն տնտեսապես զարգացած երկրներում է:

Այնուհանդերձ, բանկային գործունեությունը, անկախ տվյալ երկրի տնտեսության կայունության աստիճանից, ամենից շատ ռիսկ պահանջող գործունեություններից մեկն է: Բանկերի կայունության և կենսունակության հետ կապված խնդիրները կարելի է դիտարկել երեք տեսանկյունից: Առաջինը, տնտեսության ընդհանուր իրավիճակն է և նրա շարժման ուղղությունը (վերելք, թե՞ անկում): Երկրորդ՝ երկրում իրականացվող դրամավարկային, բյուջետային քաղաքականությունն է, իսկ երրորդը՝ հենց այդ բանկերի գործունեությունն է, դրանց արդյունավետությունը, ֆինանսական կշռադատված քաղաքականությունը, բանկային ռիսկերի իրական գնահատումը և դրանց նվազեցնելու նպատակով ձեռնարկվող միջոցառումները, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակը: Ահա այս երեք գործոններն են կանխորոշում բանկային համակարգում տեղի ունեցող գործընթացները:

Բանկային համակարգի կատարելագործումը առաջ է բերում նոր հիմնախնդիրներ: Այդպիսի հիմնախնդիրներից են՝ վարկային ներդրումների հետ կապված մեծ ռիսկերը և բանկային վարկի վերադարձման ապահովումը: Բանկային համակարգի անցած ժամանակաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների

արդյունքները թույլ են տալիս գալ այն եզրակացության, որ նրա զարգացման էքստենսիվ փուլը (բուռն քանակական աճի փուլը) ավարտվել է և աստիճանաբար առևտրային բանկերը մտնում են իրենց կյանքի նոր ուղծվարին փուլ:

Բանկային վարկը, պահպանելով իր հատկանիշները, միաժամանակ ձեռք է բերում յուրահատուկ գծեր՝ կապված վարկատուի և վարկառուի (փոխառուի) միջև եղած փոխադարձ կապերի ու հարաբերությունների հետ: Առաջին հայացքից բանկերի և մնացած մյուս սուբյեկտների միջև եղած փոխհարաբերությունների առանձնահատուկ գծերն ի հայտ են գալիս իրավական հարաբերությունների տեսքով: Միևնույն ժամանակ բանկային վարկը ներկայանում է որպես տնտեսական հարաբերությունների համակարգ, որն ունի իր որակական ու քանակական կողմը և այդ հարաբերությունների համակարգի մեջ ներառված են նաև իրավական հարաբերությունները:

Ներկայումս բանկերի մեծամասնությունը չունեն այն հիմնախնդիրները, որոնք կապված են ոչ բավարար չափով փոխառու միջոցներ ունենալու հետ: Այսօր վարկավորող բանկերը բախվում են մեկ այլ հիմնախնդրի հետ, այն է՝ վարկերի վերադարձելիության ապահովության մեխանիզմի կատարելագործումը և վարկի տրամադրումից եկամուտի ստացումը: Պետք է նշել, որ վարկավորման գործընթացում կիրառվող սկզբունքներից ամենահիմնականները՝ վերադարձելիությունը, ժամկետայնությունը, վճարելիությունը, իսկ դրանցից իր էությամբ կարևորված է վարկի վերադարձելիությունը, քանի որ դրանով է պայմանավորված վարկատու-վարկառու փոխհարաբերության արդյունավետ և հուսալի գործունեության իրականացումը:

Վարկերի տրամադրման գործընթացի էական կողմը վարկառուի *վարկունակության գնահատումն է*: Այդ գործընթացը բաղկացած է հարցերի պատասխաններից ու տեղեկատվության վերլուծության հիման վրա կատարած դատողություններից: Փորձ և արհեստավարժություն է պահանջվում, քանի որ բանկը պարտավոր չէ մեկնաբանել այնպիսի տեղեկատվություն, որը կարող է թերի կամ անորոշ լինել:

Բանկը պարտավոր է իմանալ վարկառուի իրավական կարգավիճակը և այն, թե ում է պատկանում տվյալ ձեռնարկությունը, կազմակերպությունը և հիմնարկությունը: Սեփականության կառուցվածքը հաճախ բարդ է լինում և ներառում է անհատների, ընկերությունների ու կազմակերպությունների միջև տարաբնույթ կապեր: Անհրաժեշտ է հստակ պարզել այդ փոխհարաբերությունների բնույթը՝ դրանց հետ կապված ռիսկերի հետ միասին: Բանկը պետք է տեղյակ լինի վարկառու սեփականատերերի ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակներին:

Վարկունակությունը գնահատելիս պահանջվում է գործարարության (քիզնես) շուկայի, հաճախորդների, գների, մատակարարների ու մրցակիցների մանրամասն վերլուծություն: Այս գնահատումը համապատասխանում է վարկառուի նպատակներին:

Բանկը պետք է վերլուծի վարկառուի գործառնական փուլի տևողությունը և որոշի կապիտալի դիրքն ու շրջանառու կապիտալի հետագա կարիքները: Վերջինս վարկի սպասարկման հետ կապված հարցեր է առաջացնում, այն է՝ արդյո՞ք վարկառուի կապիտալը համարժեք է առաջարկվող պարտքի ծախսերը հոգալու համար, և արդյո՞ք վարկային միջոցների օգտագործումը կփոխի վարկառուի գործունեության իրականացման ձևը:

Ցանկացած վարկառուի վարկունակության վճռորոշ գործոնը վարկը մարելու ունակությունն է: Վարկունակությունը գնահատելու համար բանկը պետք է ուսումնասիրի վարկառուի ֆինանսական հաշվետվությունները, մասնավորապես՝ հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, որը նրան հնարավորություն կտա, գնահատել վարկառուի ընդհանուր ֆինանսական վիճակը, էական հոդվածները և զարգացման միտումները: Գալիք տարվա կանխատեսումները պետք է համեմատվեն անցյալ ժամանակաշրջանի տվյալների հետ՝ որոշելու, թե որքանով են դրանք իրական: Այս վերլուծությունից ելնելով՝ կազմվում է դրամական հոսքերի վերաբերյալ հաշվետվություն: Էական է, որ վերլուծության ընթացքում բանկը ստուգի վարկառուի տրամադրած տեղեկությունների արժանահավատությունը: Հարկային կամ մյուս այլ նպատակների համար պատրաստված ֆինանսական հաշվետվությունները հնարավոր է, որ բանկի համար ստույգ կամ պիտանի տեղեկություն չպարունակեն: Հնարավոր է, որ բանկը ֆինանսական հաշվետվություններ կազմի վարկառուի հետ ծավալած քննարկումների միջոցով և ստուգի հավաստիությունը: Եթե վարկառուն հրաժարվում է տեղեկատվություն տրամադրել, կամ տրամադրում է այնպիսի տեղեկատվություն, որը հնարավոր չէ հաստատել կամ ստույգ չէ, բանկը պետք է լրջորեն վերանայի վարկավորման գործընթացը շարունակելու հարցը: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել վարկի սպասարկման և ծախսածածկման ցուցանիշների վերլուծությանը:

Հայաստանի բանկային համակարգի պրակտիկ փորձը վկայում է, որ վարկառուն ի վիճակի կլինի կատարել իր վրա վերցրած բոլոր պարտականությունները այն դեպքում, եթե նա օժտված է վարկի օգտագործման ունակությամբ, շահույթ ստանալու կարողությամբ, սեփական կապիտալի առկայությամբ, վարկի վերադարձելիության երաշխիքներով ապահովվածությամբ:

Վարկառուի կողմից ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնելու ունակության գնահատման առումով պետք է կատարել մանրամասն ուսումնասիրություն հիմնադիրների, առանձին ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի մասին և ավելի շատ ընդհանուր տեղեկություն ստանալ տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ: Այսպիսի գնահատումը հնարավորություն է տալիս որոշելու վարկառուի պատասխանատվության չափը վարկային գործարքի պայմանների խախտման ժամանակ:

Տնտեսվարող սուբյեկտի (վարկառուի) կարողությունը և վարկային գործարքի արդյունավետ իրականացման նախապայմանը նրա կողմից պարտադիր կարգով շահույթ ստանալն է, քանի որ վարկը մարելու հիմնական աղբյուրը շահույթն է:

Տնտեսվարող սուբյեկտի շահույթ ստանալու կարողությունը գնահատելու համար անհրաժեշտ է կատարել.

1. Արտադրական և իրացման գործունեության վերլուծություն,

2. Ֆինանսական գործունեության վերլուծություն:

Արտադրական և իրացման գործունեության վերլուծության ընթացքում պետք է պարզել արդյոք վարկառու հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը լիարժեք ապահովված է հիմնական միջոցներով, նյութական ռեսուրսներով և աշխատուժով, նրա ենթակայության ոչ ընթացիկ և նյութական ընթացիկ ակտիվներն արդյունավետ են օգտագործվել, թե՞ ոչ, արտադրվող արտադրանքի որակը համապատասխանում է միջազգային չափանիշներին, գների քաղաքականության իրականացման ռազմավարությունը, ի՞նչ մակարդակով է ընթանում, տվյալ ճյուղում և իրացման շուկայում ինչպիսի՞ն է այդ սուբյեկտի տեղն ու դրա հեռանկարները:

Տնտեսվարող սուբյեկտի գործունեության ֆինանսական վերլուծությունը ներառում է նրա ընդհանուր ծախսերի մակարդակի, շահույթի ստացման աղբյուրների ու դրա օգտագործման ուղիների և շահութաբերության գնահատման ուսումնասիրությունն ու հաշվարկումը:

Շահույթը չստանալու կամ բավարար չափով չլինելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը վարկի գծով պարտքի մարման համար ստիպված է լինում վաճառել իր ակտիվները: Դրանք սուբյեկտի ենթակայության այն ակտիվներն են, որոնք իրենց կազմով ու կառուցվածքով համարվում են լրացուցիչ երաշխիք՝ վարկը մարելու համար: Սակայն պետք է նշել, որ վարկառուի ոչ բոլոր ակտիվներն են, որ ծառայում են վարկի վերադարձելության ապահովման համար: Այդ նպատակին ծառայում են այն ակտիվները, որոնք համարվում են նրա սեփական կապիտալը: Այդ իսկ պատճառով էլ բանկը վարկ տրամադրելու ժամանակ հատուկ ուշադրություն է դարձնում վարկառուի բավարար չափով սեփական կապիտալ ունենալու վրա:

Բանկային վարկավորման գործընթացի ապահովման առկայությունը դժվար է վերաբերել որևէ սկզբունքի, քանի որ նրա օրենսդրության կարգավորումը միանշանակ կերպով դեռևս մշակված չէ: Մի կողմից՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածը այդ սկզբունքը չի դասում պարտադիր սկզբունքների շարքին, և ոչ մի տեսակի նորմատիվային ակտ չի պարունակում ապահովման մասին դրույթներ: Մյուս կողմից վարկային հնարավոր կորուստներ ունենալու պատճառով իրականացվող ներքին պահուստավորման չափանիշները դասակարգվում են՝ ելնելով այդպիսի ապահովման առկայությունից ու դրա որակից: Ուստի կարելի է ասել, որ ապահովման սկզբունքը տնտեսապես խթանվող պահանջ է, որի ոչ ճիշտ հետևանքներից տուժում է բանկը: Բանկն, օրինակ, կարող է վարկ տալ առանց դրա ապահովման՝ հաշվի առնելով հաճախորդի հեղինակային համբավը: Սակայն վարկատուն տվյալ պարագայում տրամադրված վարկը ժամանակին չվերադարձնելու դեպքում կունենա բավականաչափ մեծ գումարի կորուստ, քան վարկի ապահովման դեպքում: Հետևաբար, կարելի է գալ այն հետևության, որ եթե վարկի մարման մեխանիզմը և վարկային պայմանագրերում դրա ամրագրումը հանդիսանան վարկի վերադարձման հիմնական նախադրյալ, ապա վերադարձումն ապահովելու միջոցների սահմանումը կլինի այդ վերադարձման երաշխիքը: Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները վարկատուին երաշխավորում են նրա վարկային գումարների պաշտպանվածությունն ու շարժունակությունը, որոնք վարկի վերադարձման մեխանիզմի կարևոր բաղադրամասերից են:

Պարտավորությունների կատարման ապահովման եղանակները պայմանավորված են այնպիսի միջոցառումներով, որոնք հիմք են տալիս և միաժամանակ երաշխավորում են հիմնական պարտավորության կատարումը: Ըստ էության այդ միջոցառումները արտահայտվում են հետևյալ տեսքով՝ կամ պահուստավորել գույքը, որի հաշվին հնարավոր կլինի պարտավորությունների կատարումը հասցնել ավարտին (գրավ), կամ էլ համապատասխան իրավասու մարմիններ իրենց կողմից տան պարտավորություն՝ որոշակի գումար վճարելու համար (բանկային երաշխիք): Այսպիսով, վարկի վերադարձման ապահովման միջոց ասելով հասկանում ենք պարտքի մարման կոնկրետ աղբյուրը, այն օգտագործելու համար վարկատուի իրավունքի իրավաբանական ձևակերպումը, կոնկրետ աղբյուրի բավարար ու հարմար լինելու նկատմամբ բանկի վերահսկողության կազմակերպումը:

Հաշվի առնելով կայուն աշխատող բանկերի պրակտիկան՝ կարելի է առանձնացնել ապահովման համատեղ համակարգի հետևյալ տարբերակները.

1. Անշարժ գույք, արժեթղթեր, տեխնոլոգիական սարքավորումներ, պատրաստի արտադրանք: Բանկի կողմից այս տարբերակն օգտագործվում է երկարաժամկետ վարկային պարտավորությունների (1 տարուց ավելի ժամկետով) ապահովման ժամանակ:
2. Անշարժ գույք, արժեթղթեր, երաշխիքներ (երաշխավորություն), շրջանառության մեջ գտնվող ապրանք: Տվյալ տարբերակը ամբողջությամբ կիրառվում է մեկ կամ մի քանի հարակից տարածաշրջանների տնտեսվարող սուբյեկտների վարկավորումն ապահովելու համար: Այդ տնտեսվարող սուբյեկտներն իրար հետ կապված են ընդհանուր տնտեսական գործունեությամբ:
3. Անշարժ գույք, երաշխավորություն, ապրանքը պահեստում (շրջանառության մեջ) կամ շահագործման մեջ գտնվող սարքավորում: Սա կիրառվում է խոշոր տնտեսվարող սուբյեկտների վարկավորման ժամանակ՝ իրացվելության համալիր ապահովման հասնելու նպատակով:
4. Մասնակի ապահովումն իրականացվում է վարկառուի կողմից, իսկ ապահովման հիմնական մասը՝ իրավաբանական համարվող երրորդ անձի կողմից: Սա կիրառվում է այն տնտեսվարող սուբյեկտների վարկավորման համար, որոնք կապված են համատեղ գործունեությամբ պայմանագրով ունեցած պարտավորություններով:

Գլխավոր սկզբունքը, որով պետք է շարժվի բանկը, համատեղ ապահովման ժամանակ, փոխզիջման գնալն է, այսինքն ստեղծել այնպիսի պայման, որը հարմար լինի ոչ միայն բանկին, այլև հաճախորդին, փոխադարձաբար շահավետ հարաբերություններ ունենալու համար:

Վարկի վերադարձման ապահովման աշխատանքում կարելի է առանձնացնել ընդհանուր ուղղություններ: Այսպես, նախ վարկ տալու որոշում կայացնելիս մեծ ուշադրություն պետք է դարձնել վարկի պարամետրերին և

ապահովման լրացուցիչ եղանակին՝ նրա գնի ու իրացվելիության համապատասխանությամբ: Այնուհետև, լրացուցիչ ապահովման յուրաքանչյուր տարբերակ պետք է դիտարկել բանկային օրենսդրության տեսանկյունից՝ հաշվի առնելով ՀՀ կենտրոնական բանկի կարգավորող չափորոշիչները:

Այսպիսով, վարկատու բանկն իր տրամադրության տակ ունի վարկի վերադարձումն ապահովելու գանազան միջոցներ: Սակայն վարկի չմարվելը կանխելու աշխատանքի արդյունավետությունը կախված է նաև այդ խնդիրը լուծելու բոլոր մեթոդներին տիրապետելու մակարդակից, ինչը նպաստում է վարկային ռիսկի նվազմանը:

Բանկային վարկի վերադարձումն իրենից ներկայացնում է վարկատուի և վարկառուի միջև գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունների կարգավորման հիմքը և միաժամանակ հանդիսանում է վարկավորման բոլոր կառույցների ու վարկային գործընթացի հիմնական հենարանը:

Վարկի վերադարձման առանձնահատկություններից կարելի է առանձնացնել նաև հետևյալները:

Նախ, վարկատուն ուսումնասիրում և ընտրում է փոխառու միջոցների ներդրման ոլորտը, վարկի քանակական պարամետրերը, վարկային պարտավորությունների կատարման ապահովման մեթոդներն ու պայմանները՝ նվազագույն վարկային ռիսկով վարկի ժամանակին վերադարձման նպատակով: Տրամադրված վարկի վերադարձվելիության ընթացքը կախված է վարկառուից, նրա վարկունակությունից և տնտեսական իրական իրավիճակից: «Վարկի վերադարձվելիություն» ասելով հասկանում ենք բանկի մասնագետների նախնական և հետագա աշխատանքների այն ամբողջությունը (ներառյալ վարկային գործընթացի տեխնոլոգիան), որը նպատակաուղղված է ներգրավվող ու տեղաբաշխվող դրամական միջոցների ամբողջ հոսքի վերադարձմանը, ինչպես նաև բանկի եկամտաբերության ամերաժեշտ մակարդակին հասնելը: Դրամական միջոցների վերադարձվելիության ապահովման մակարդակը բանկի համար հանդիսանում է այն կարևորագույն հանգուցակետը, որտեղ կենտրոնանում են վարկային քաղաքականության դրական ու բացասական կողմերը՝ ներգրավված ու տեղաբաշխված ռեսուրսների կառավարման ուղղությամբ:

Վարկառուների ֆինանսական կայունության գնահատման տարբեր մեթոդների համեմատության և վերլուծության ընթացքում տնտեսական ցուցանիշների համակարգի, տարբեր գործակիցների հաշվարկման և դրանք գործող նորմատիվների հետ համեմատության օգնությամբ, կարելի առանձնացնել մի շարք բերություններ, որոնք հատուկ են ավանդական մոտեցումներին: Դրանք են.

- շահութաբերություն չապահովող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների հետ կապված, բանկերն ի վիճակի չեն ավելի արդյունավետ գնահատելու յուրաքանչյուր ֆինանսական գործակցի մեծությունը, քանի որ այդ սուբյեկտների գծով եղած տեղեկատվությունն իրարամերժ է:
- ինֆլյացիայի պայմաններում վարկունակության գնահատման ֆինանսական ցուցանիշները դեռևս չեն կարող բնորոշել տվյալ բանկի հաճախորդի իրական վիճակը:
- վարկավորման ռիսկի ավելացման դեպքում, ֆինանսական գործակիցները համապատասխան տեղեկատվություն չեն տալիս ուսումնասիրվող տնտեսվարող սուբյեկտների դիմամիկ գործընթացների վերաբերյալ:

Վարկի վերադարձվելիության ապահովման օպտիմալ եղանակների վերլուծության և քննարկման ընթացքում, ուշադրություն է դարձվում գրավի օբյեկտի բավարար լինելուն: Գրավի տեսակի որոշման ժամանակ հնարավոր է հաշվարկման երկու տարբերակ: Առաջին տարբերակը վարկային պայմանագրում ընդգրկում է այն, որ գրավը ենթակա է գնահատման դրամով՝ այն գումարի չափով, որը համարժեք է որոշակի փոխարժեքային գումարին: Այն որոշվում է պայմանագրի կնքման օրվա և վարկի վերադարձման օրվա պաշտոնական կուրսով: Օգտագործելով նման հնարավորությունները, վարկատուն իրեն կվնասագերծի ինֆլյացիայի բացասական հետևանքներից: Երկրորդ տարբերակը նախատեսվում է վարկային ռիսկերի նվազեցման նպատակով վարկային մարժայի վերանայման պայմանները ժամանակի ընթացքում: Ներկայացված են գործոններ, որոնք օգտագործվում են բանկային պրակտիկայում ապահովվածության արժեքի գնահատման ժամանակ՝ գործակցի առավել ճշգրիտ որոշման նպատակով, գործակից, որը հակադարձ համեմատական է գրավի մարժայի մեծությանը:

Բանկային վարկի վերադարձումն ապահովելու մեխանիզմ ասելով հասկանում ենք միասնական համակարգ՝ կազմված վարկային ռիսկի կառավարման մեթոդներից, որոնք սահմանում է բանկն ինքնուրույն կերպով, և վարկային գործընթացի իրավական ապահովումից, որը կարգավորում է պետությունը: Այդպիսի մեխանիզմի ստեղծման նպատակն է՝ ուժեղացնել վարկառուի պատասխանատվությանը: Ըստ այդմ տվյալ մեխանիզմը ներառում է նախ՝ նպատակների համակարգ և դրանց հասնելու եղանակների մշակում, երկրորդ՝ միջոցառումների համակարգ, ստեղծելու վարկի «վերադարձման» իրավական, կազմակերպական, տեխնոլոգիական ու տեղեկատվական ենթակառուցվածքները: Այսպիսով, վարկավորման ժամանակ անհրաժեշտ է ունենալ գործողությունների հստակ, գիտականորեն հիմնավորված ծրագիր, կոնկրետ նպատակներ ու խնդիրներ, այսինքն՝ անհրաժեշտ է մշակել վարկային քաղաքականությունը: